# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1069-Ա

## Հ Ր Ա Մ Ա Ն

«27» նոյեմբերի 2023թ.

### ՇԱՀԵՆ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի պահանջները, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված արտաքին մրցույթի հարցազրույցի մրցութային հանձնաժողովի եզրակացությունն ու Շահեն Բալաբեկյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. Շահեն Բալաբեկյանին 2023 թվականի նոյեմբերի 27-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 94-30.5-Մ3-2) պաշտոնին:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին:

Փորձաշրջանը համակարգող Մարինե Գյարգոյանին՝ առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածով:

3. Շահեն Բալաբեկյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

27.11.2023

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ք. Գավառ